

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

Մարզի խորհրդի նիստը վարում էր ՀՀ Կոտայքի մարզպետ Ռ.Պետրոսյանը

ք.Հրազդան

16.11.2018թ. ժամը 11.⁰⁰

ՀՐԱՎԻՐՎԱԾ ԷԻՆ՝

- Ա.Հովհաննիսյան-ՀՀ ոստիկանության Կոտայքի մարզային վարչության պետ
- Ռ.Բազիկյան-ԱԱԾ Կոտայքի մարզային վարչության պետ

ՄԱՄՆԱԿՑՈՒՄ ԷԻՆ՝

- Ա.Ավետիսյան- ՀՀ Կոտայքի մարզպետի տեղակալ
- Լ.Մադոյան- ՀՀ Կոտայքի մարզպետի տեղակալ
- Գ.Առուստամյան-ՀՀ Կոտայքի մարզպետի օգնական
- Ա.Զիլինգարյան-ՀՀ Կոտայքի մարզպետի օգնական
- Լ.Պետրոսյան- ՀՀ Կոտայքի մարզպետարանի գլխավոր քարտուղար
- Մարզպետարանի ստորաբաժանումների ղեկավարներ
- Մարզի խորհրդի անդամ համայնքների ղեկավարներ

Օ Ր Ա Կ Ա Ր Գ՝

1. ՀՀ Ազգային ժողովի ընտրությունների նախապատրաստական աշխատանքների մասին:
/զեկուցող՝ ՀՀ Կուրայքի մարզպետարանի ՏԻ ԵՎ ՀԳՄ հարցերով վարչության պետ Հ.Ալեքսանյան/
2. Մարզի համայնքների սեփական եկամուտների հավաքագրման ընթացքը 2018թ. 10 ամիսների կտրվածքով:
/զեկուցող՝ ՀՀ Կուրայքի մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետի պաշտոնակատար Գ.Գուլյան/
3. Այլ հարցեր

ԼՍԵՑԻՆ՝

1. ՀՀ Կուրայքի մարզպետարանի ՏԻ ԵՎ ՀԳՄ հարցերով վարչության պետ Հ.Ալեքսանյանի զեկուցումը ՀՀ Ազգային ժողովի ընտրությունների նախապատրաստական աշխատանքների մասին:
Ձեկուցումն ընդունվեց ի գիտություն:/Կցվում է/:

Առաջարկվեց համայնքների ղեկավարներին՝

-Ձեռնարկել բոլոր անհրաժեշտ միջոցները ՀՀ Ազգային ժողովի ընտրությունները պատշաճ անցկացնելու համար՝ առաջնորդվելով Հայաստանի Հանրապետության և ՀՀ քաղաքացու շահերով ու բացառելով վարչական լծակների օգտագործման ղեկքերը:

ՀՀ ոստիկանության Կոտայքի մարզային վարչության պետ Ա.Հովհաննիսյանը հորդորեց համայնքների ղեկավարներին ՀՀ Ազգային ժողովի ընտրություններին ընդառաջ գործել միմիայն օրենքի շրջանակներում:

2. ՀՀ Կոտայքի մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետի պաշտոնակատար Գ.Գուլյանի գեկուցումը մարզի համայնքներում սեփական եկամուտների հավաքագրման ընթացքի մասին 2018թ. 10 ամիսների կտրվածքով:

Ձեկուցումն ընդունվեց ի գիտություն: /Կցվում է/:

Առաջարկվեց համայնքների ղեկավարներին՝

-Ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ մինչև տարեվերջ համայնքների սեփական եկամուտների հավաքագրման ցուցանիշներն առավելագույնի հասցնելու ուղղությամբ:

-Ջշտել խոշոր ապառքատերերի ցուցակները և ներկայացնել տեղեկատվություն ապառքատերերի նկատմամբ կիրառված գործողությունների վերաբերյալ:

-2019թ. բյուջեն հաստատելիս առաջնորդվել ՀՀ օրենքներով սահմանված պահանջներով, վերանայել հավաքագրվող եկամուտների ելակետային ցուցանիշները:

Ամփոփելով մարզի խորհրդի նիստը մարզպետ Ռ.Պետրոսյանը առաջարկեց համայնքների ղեկավարներին՝

-Ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ համայնքներում ինքնակամ շինությունների հայտնաբերման, օրինականացման, ինչպես նաև հետագայում ապօրինությունները կանխելու և օրենքը շրջանցելու դեպքերը բացառելու ուղղությամբ: Շինթույլտվությունների տրման գործընթացը համապատասխանեցնել կառավարության կողմից սահմանված կարգին:

-Խիստ հսկողություն սահմանել համայնքային սեփականություն հանդիսացող հողերի վաճառքի աճուրդների կազմակերպման ընթացքի նկատմամբ՝ ապահովելով Հողային օրենսգրքով սահմանված պահանջների խստագույն պահպանումը:



Ռ.ՊԵՏՐՈՍՅԱՆ